ԴԵՊՈՒՏԱՏ ՀՐԱՉՅԱ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆԻ ԵԼՈՒՅԹԸ

Մենք լավ ենք հիշում արցախյան շարժման բոլոր փուլերը, շարժում, որ ծագեց վերակառուցման հեղափոխական գաղափարից։ Հիշում ենք այդ շարժման արշալույսը։ Հուլսերի ինչ սքանչելի օրեր էին։ Իր սանահիկ և հպարտ լեռներում ելավ խիզախ արցախցին, խորհրդային երկրի և աշխարհի առաջ բարձրաձայն հայտնելու ընդամենը մի բնական և բանական ցանկություն՝ դուրս գալ խորքմոր տնից և ներս մտնել հարազատ մոր տունը, ըստ որում՝ նույն խորհրդային հարկի տակ։ Հիշում եմ այդ օրերի մեր հավաքների, միտինգների, դիմումների կարգախոսները և դրանց մեջ հատկապես մեկը՝ Լենին—Գորբաչով—Վերակառուցում։ Այդ կարգախոսը չհիալ իր բարձրությունից անգամ սումգայիթյան դաժան և ըստորը ոճրագործությունից հետո։ Այդ լոզունգը ծածանվում էր օդում անգամ այն հինգ ամիսների ընթացքում, երբ Հայաստանի ղեկավարությունը, կորցրած ղեկը, ամեն կերպ խուսափում էր ընդունելու արցախցիների կանչը, երբ այդ կանչը հնչում էր երկրագնդի բոլոր ռադիոալիքներով։ Հայ երիտասարդությունն անգամ կարողացավ, ատամները սեղմելով, երկար ամիսներ զսպել իր զայրույթը, չդիմելով վրիժառության՝ Սումգայիթի արյունոտ, անլուր ողբերգության դիմաց։ Ինչո՞ւ։ Որովհետև մենք հավատում էինք սոցիալիստական երկրի, լենինյան պատգամներով կրթված համամիութենական ղեկավարության ողջամտությանը, արդարության հաղթանակին։ Բայց գործը ուշացավ։ Իսկ ուշացած գործի վրա ձյուն է նստում։ Սկսվեց արցախյան հարցի դրիսվանը։ Անցած տարվա արյունոտ փետրվարին հայորդեցին համամիութենական լրատվական աղբյուրների ստանդարտ հաղորդագրությունների ամիսները, ադրբեջանական լրատվական աղբյուրների ագրեսիվ կոչերի ամիսները, հուսախաբության հոսքը, Ադրբեջանի հայության համատարած գաղթի նոյեմբերը և, վերջապես, ողբալի դեկտեմբերը։ Այս տանջանքների և տենչանքների, հույսերի և հուսախաբությունների շղթան շարունակվեց և այս տարի։ Գործը նորից ուշացավ, և ձյունը նորից շարունակեց նստել նրա վրա։ Իսկ նաև առավել դժնի օրեր։ Հայ ժողովուրդը դժվարին ճիգերով սկսեց բուժել իր վերքերը, երբեք չհեռացնելով Արցախի հերոս հայրենասերներին պարգած իր աջ ձեռքը։ Իսկ հրեական հանրապետության ժողովուրդը, անկասկած, անալով իր ղեկավարության հրամանագրերին, ավելի սանձարձակ ու կատաղի հարձակումներ սկսեց Արցախի և հայ ժողովրդի դեմ։ Բանը հասավ այսօրվա անբարևկայելի իրադրությանը, երբ Արցախի և համայն հայության լույսի պես պարզ ու արդար պահանջն ուզում են խեղդել քաղաքական, ֆիզիկական, բարոյական և, մանավանդ, տնտեսական ճնշման վայրենի ծրագրով...։

Ինչն է այս ամենի պատճառը։ Այն, որ մենք անհասկանալի համառությամբ կառչում են, այսպես կոչված, երկրի սահմանադրության ինչ-որ մի կետից, երբ բոլորին հայտնի է, որ այդ սահմանադրության հոդվածների մեծ մասը ստեղծվել է Ստալինի և Բրեժնևի օրոք, որ այդ սահմանադրության առանձին հոդվածներն այնքան կեստիկ են, այնքան հակասական, որ թույլ են տալիս անվերջ խախտել կամ շրջանցել այդ հոդվածները։ Ինչպե՞ս կարելի է կառչած մնալ սահմանադրության հակասական մի կետից, որն ամբողջությամբ ժխտվում-հերքվում է Լենինի հավերժ կենդանի մի դրույթով՝ ազգերի ինքնորոշման իրավունքի անվերապահ դրույթով։ Ի դեպ, ինձ զարմացնում է, որ ազգային հարցի վերաբերյալ Խորհրդային Միության կոմունիստական կուսակցության նոր ծրագրում լենինյան այս միտքը ինչ-որ զգալի չափությամբ է հիշատակվում և այն էլ մի անգամ։ Լենինն այս եզրին հանգեց, երբ ուսումնասիրում էր կապիտալիզմի ամենահոռի արատներից մեկը՝ գաղութատերերության խնդիրը։ Դատապարտելով կապիտալիզմին բոլորը գաղութատիրությունն բոլոր ձևերը, առաջադրելով դրա անհապաղ վերացումը, Լենինը հռչակեց ազգերի ինքնորոշման իրավունքը։ Դժբախտաբար, Լենինի հիվանդությունը և այնուհետև մահը, թույլ չտվեցին խորապես ճշգրտել նրա մտքի կենսագործումը Խորհրդային Միության մեջ մտնող ազգերի ֆեդերացիայի գոյությունի պայմաններում։ Հետագայում ստեղծվեց այն մոդելը, որի խախուտ կողմերն այսօր մեր աչքի առաջ փուլ են գալիս դրա տերահռչակ ստեղծողների՝ Ստալինի—Ժդանովի և Բրեժնև—Սուսլովի արատավոր հիշատակի վրա։ Միութենական հանրապետությունների հլու-հպատակություն ենթարկվածության փաստը կենտրոնին միութենական հանրապետության համար օրինակ դարձավ առավել ստրկացած, գաղութային վիճակում պահել իր «հովանու» տակ գտնվող ազգային փոքր կազմավորումները՝ ինքնավար հանրապետությունները, մարզերը, երկրամասերը, շրջանները։ Ամենից շատ և ամենից ագահ ձևով այդ մեծապետական իրավունքից օգտվեց Ադրբեջանի Խորհրդային հանրապետությունը։ Թե անցած տասնամյակների ընթացքում ինչե՞ր եղան Նախիջևանում, Ղարաբաղում, թե ի՞նչ հալածանքներ ենթարկվեցին Ադրբեջանում բնակվող հայերը, ինչպես նաև քրդերը, հրեաները, ռուսները և մյուս ազգերի ներկայացուցիչները, հայտնի է բոլորին։ Իսկ հիմա, նույն այդ Ադրբեջանի կառավարիչները կաչվից դուրս են գալիս, դիմում են ամեն տեսակի քաղաքական և քրեական բաց և փակ խարդավանքների, որ երկարաձգեն իրենց գաղութատիրական իշխանությունը։ Մի՞թե սա ինտերնացիոնալիստ-կոմունիստի վարքագի՞ծ է, թույլ տվեք հարցնել։ Մենք ի՞նչ ժամանակում ենք ապրում. քսաներորդ դարի վերջո՞ւմ, թե միջնադարի գեհենում։ Մենք որտե՞ղ ենք ապրում. խորհրդային երկրո՞ւմ, թե Գոբի անապատում, որտեղից խուժել են թուրանական ցեղերը։ Այն ամենը, ինչ երեկ և այսօր կատարում են Ադրբեջանի կառավարիչները, ցույց է տալիս ոչ թե նրանց սոցիալիստական դեմքը, այլ նրանց գաղութատիրական սփաթը։ Ավելին. գաղութատիրության դասական երկիր կապիտալիստական Անգլիան առավել գթասա՞ տնվեց ընդառաջելու ազգերի ինքնորոշման սկզբունքին, հրաժարվելով իր նախկին գաղութներից, քան այսօրվա սոցիալիստական Ադրբեջանը, որը չգիտես ինչու, խլացել է Արցախի՝ պատմական Հայաստանի այդ անտրոհելի մասի ուծումնտոկոսանոց հայության ձայնի առաջ և ամենաբիրտ միջոցներով ճգնում է խափանել վերակառուցման ոգուց բխած նրա շարժումը։ Ադրբեջանում մերթ կազմակերպում են կեղծ ու պատիր «պատմագրությամբ» լի հոդվածների հեղեղ մամուլում, մերթ պաթետիկ կոչեր հեռուստատեսության էկրանից և ռադիոյից, մերթ խժռուած ելույթներ հրապարակներում, մերթ անսքող սպառնալիքներ՝ կրկնելու Սումգայիթը, մերթ «խաղաղության երթի» անվան տակ խուսեցնում արշավանք Արցախի սահմանների վրա, մերթ Հայաստանին և Արցախին սահմանակից գոտիներում հարձակումներ հովիվների և խաղաղ բնակիչների դեմ, մերթ հալածական ոտնձգումներ դեռևս Ադրբեջանում և Բաքվում ապրող հայերի հանդեպ, մերթ շեջնանական վակխանալիա մեջ հասած բնական զարհուրելի աղետի առիթով, մերթ Հայաստանի և Հայաստանի ղեկավարության հասցեին զրպարտիչ ոնձգոցներ Խորհրդային իշխանության վերին ատյաններում, մերթ ջղագրգիռ դիմումներ և նամակներ երկրի մտավորականներին, մերթ անամոթ, անիրավ հրատարակություններ արտասահմանի մուսաֆիռներ թափփուկների միջոցով, մերթ վայրահաչ հարցազրույցներ բրիտանական մամուլի էջերում... Ո՞րը թվարկես. ամեն ինչ, ամեն բան արվում է, որպեսզի ծախողվի Արցախի պրոբլեմը, խանգարվի նրա լուծումը։ Ինչ ՝ասուն տաս այս ամենին։ Հիրավի, սա ազգամոլության սադիզմ է, և այդ սադիզմն այժմ իր գագաթին է հասել։ Արդեն մեկ ամիս է, խորհրդային ընդհանուր երկրին պատկանող երկաթուղին Ադրբեջանի տարածքում ենթարկվել է կաթվածի։ Հայաստանի և Արցախի, մանավանդ մեր ազատյալ շրջանների կենսական դիրքը խախտվել է այդ երկաթուղային և ավտոերթուղային ճանապարհների յուրօրինակ անբնական պատճառով։ Թե ինչպիսի ծանր կացության մեջ ենք մենք գտնվում՝ պարզ ու հայտնի է մեզ, և ես հավատացած եմ՝ նաև կենտրոնական իշխանություններին։ Ես հարց եմ հղում Խորհրդային Միության հաղորդակցության և ներքին գործերի միներ, Խորհրդային Միության վերահսկողության մարմիններին և վերջապես Նորընտիր Գերագույն խորհրդին։ Մի՞թե այսպես են կենսագործվում ողջ երկրի համար ստեղծված օրենքները, մի՞թե հրգոր մեր Միությունը ձև ու միջոց չի կարողանում գտնել ներազգային առանձին լկտիացած ղեկավարների վրա՝ ենթարկվելու Խորհրդային օրենքներին։ Չէ՞ որ այդ երկաթուղին, այդ ավտոճանապարհը վաղն էլ պիտի իր տեղերում մնան և վաղն էլ պիտի ծառայեն Խորհրդային Հայաստանին։ Մվ է իրավունք տվել Ադրբեջանին սեփականելու Խորհրդային Միության ազգային սեփականությունը։ Երկու տարի է, ինչ Խորհրդային Միության հինգ միլիոնանոց և Սիլուռքի երկու միլիոնանոց հայ ժողովուրդը, որն ամբողջությամբ, կրկնում եմ՝ ամբողջությամբ, կանգնած է Խորհրդային Միության պաշտպանության դիրքերում, որն իր բուռն, անվերապահ հավանությունն է տալիս վերակառուցման կուրսին, այդ յոթ միլիոնանոց ժողովուրդը ծվատում է իր նյարդերը, անվերջ սպասելով արդարամտության ինչ-որ լույսի։ Մենք դեռևս հավատարիմ ենք մընում արցախյան շարժման առաջին կարգախոսների բովանդակությանը։ Մենք դեռևս հավատում ենք նրանց ճշմարտությանը։ Դրա համար էլ խնդրում եմ Հայաստանի Գերագույն խորհրդին ամբողջ հայ ժողովրդի անունից որոշում կայացնել, պահանջելով կենտրոնական իշխանություններից ամենայն լրջությամբ անդրադառնալ կոնկրետ այս անօրեն շրջափակման վիճակին, իսկ մոտակա ժամանակներում նաև արցախյան հարցի արդարացի լուծմանը, նկատի ունենալով ոչ թե ընդհանրապես Արցախի հայ և ադրբեջանցի բընակչությունը, այլ Արցախի 80 տոկոսանոց հայ և 20 տոկոսանոց ադրբեջանցիների առկայությունը, և նկատի ունենալով ոչ թե Բուխարինի հակագիտական ենթադրությունները, այլ համաշխարհային պատմագրության տվյալները Արցախի աշխարհագրական, պատմական, ազգային և ազգագրական անառարկելի փաստերի վերաբերյալ։

Ասում եմ սա, բայց որոշ տագնապ եմ ապրում ասելիս, որովհետև ԽՍՀՄ Կենտրոնական կոմիտեի պլենումի և Գերագույն խորհրդի առաջիկա նստաշրջանի նախորեին, ինչ մեղքս թաքցնեմ, ներքին թելադրանքով մի երկյուղ ունեմ։ Եթե արցախյան հարցը պիտի հանձնվի տարբերի լուծմանը, եթե այն պիտի դառնա դեմագոգիայի և կամայականության առարկա, եթե չպիտի հաշվի առնվի նախկին ինքնավար մարզի բնակչության ճնշող մեծամասնության և մարզային իշխանությունների քաղաքական պահանջը, եթե ամեն ինչ պիտի մնա ստատուս քվոյի վիճակում, նշանակում է վարկածեկել վերակառուցման իդեալները, լիցք տալ ռեգիոնում ազգամոլության հակամարտությունների պերմանենտ գոյատևությանը։

Մեր ժողովուրդը ոչ անցյալում, ոչ հիմա չի հանդգնել, ոչ էլ ապագայում կըհանդգնի կանգնել ռուս կամ այլ ժողովուրդների դեմ, բարեկամության դեմ, եղբայրության դեմ։ Քանդատել սեփական ժողովրդի և այլ ժողովուրդների բյուրոկրատ անձանց, հակաժողովրդական տարբերի վարքագիծը և արարքները, բնավ չի նշանակում խորշել այդ ժողովուրդներից։ Անցյալում մեր մտավորականությունը շատ լավ գիտեր և խոհեմաբար տարբերակում էր ցարի, Գուլիցինի, Լոբանով—Ռոստովսկու, Ստոլիպինի, Պուրիշկևիչի, Լիժինի և այլոց Ռուսաստանը Լենինի, Պլեխանովի, Տոլստոյի, Չեխովի, Գորկու, Բրյուսովի Ռուսաստանից։ Արդ, երկյուղ ունեմ, որովհետև Միության խորհրդի նախագահ ակադեմիկոս Պրիմակովը անցյալ տարի հուլիսին ամենայն ակադեմիական լրջությամբ համոզում էր, որ չպիտի անդրադառնալ պատմության հին ու նոր աղտյունքներին։ Երևի թե, ըստ նրա, Վաշինգտոնի կամ Բոլիվարի պայքարը հյուսիսային և հարավային Ամերիկաների անկախության համար ավելորդ էր։ Երևի թե, ըստ նրա, Աֆրիկան հուր-հավիտյան պիտի մնար գաղութային լծի տակ կամ Իսրայելի ըստեղծման փաստը նույնպես ավելորդ էր։ Երևի թե, ըստ նրա, Եվրոպայի ֆաշիստական օկուպացիայի դեմ մղված ազատագրական պայքարը նույնպես ավելորդ էր։ Չէ՞ որ դրանք նախապես արդեն պատմական իրողություններ էին։ Վա՛յ քո մտածողությանը, ակադեմիկո՛ս։ Երկյուղ ունեմ, որովհետև մյուս՝ Ազգությունների խորհրդի նախագահ, գիտությունների թեկնածու Նիշանովն իր իսկ ղեկավարած երկրում՝ Ուզբեկստանում, ծայր առած ազգամոլության արյունալի ընդհարումները ամենայն թեկնածուական լրջությամբ բացատրում էր կոլտնտեսային շուկայում ելակի վաճառքի թերակշռության փաստով։ Երկյուղ ունեմ, որովհետև ռուս ժողովրդի առաքինի զավակ Վոլսկին մինչև հիմա էլ միամտաբար կարծում է, թե Արցախը ընդամենը կռվախնձոր է երկու հանրապետությունների միջև, ուրեմն՝ նրանց ախորժակների բավարարման համար ընդամենը մի հյուծալի պատառ երկյուղ ունեմ։ որովհետև, եթե չլինի Գերագույն իշխանության նախորոք կշռադատված որոշումը, ապա ամեն մի արարքի պրոբլեմ Գերագույն խորհրդի պատգամավորների ձայների պարզ ու մեխանիկական մեծամասնությամբ կարող է այսօր և առմիշտ տապալվել։ Եվ վերջապես երկյուղ ունեմ, որովհետև գրեթե համոզվել եմ, որ այս երկու տարում պետական և գաղափարական ոլորտներում մերը լսում են, իրենցն անում։

Հայ ժողովրդի վերջին երկու տարում թափած արյունը, նրա անմեղ զոհերի ոգին, ժողովրդի արդարացի և անդուլ մաքառման կամքը պահանջում են արցախյան պրոբլեմի ճշմարիտ լուծում։ Այդ ճշմարիտ լուծմանն են սպասում մարդկության ազնիվ մեծամասնությունը, պատմության ներկա ճակատագրական ժամանակը, վերակառուցման ազգային քաղաքականության հրամայականը։

ԱՍՏԱՂԱԿՈՒՄ. Ադրբեջանի Եկեղեցիներին տրված ու անխնա մասնված ղպրոցական ներքնաբներն ու հազարավոր ղպրոցականներ